

Կ-1309-06.04.2026-ԱՆՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» 2025 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-459-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ.

«Սահմանված առավելագույն հատուցման չափի կրկնակին գերազանցող հատուցման գին ունեցող դեղը ենթակա չէ ընդգրկման հատուցվող դեղերի ցանկում և հատուցման գնի ու հատուցման առավելագույն չափի հաշվարկներում:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1)1-ին մասի 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք (օրենքով նախատեսված կացության կարգավիճակ ունեցող) ունեցող օտարերկրացիները, որոնք ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում: Սույն կետը տարածվում է նաև օրենքով սահմանված կարգով ապաստան հայցողների ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների նկատմամբ, ովքեր ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում: Մնացած դեպքերում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներն ու ապաստան ստացած կամ չստացած փախստականներն օգտվում են բժշկական օգնության և սպասարկման լրացուցիչ ծառայություններից՝ սույն օրենքի և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի մինչև մեկ տարեկան երեխաները, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ մեկից մինչև 18 տարեկան երեխաները, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ առանց ծնողական խնամքի մնացած

երեխաների թվին պատկանող առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.».

3) 8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«8) հաշմանդամություն ունեցող երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ ծնողներից մեկը կամ որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն.».

4) 9-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«9) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետին համապատասխան որոշված շահառուները և նրանց ընտանիքի անդամները, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձինք և նրանց ընտանիքի անդամներն արդեն իսկ հանդիսանում են սույն օրենքի իմաստով ապահովագրված անձ՝ սույն մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության այլ խմբերին պատկանելու հիմքով, Հայրենական մեծ պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ.».

5) 13-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«13) Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ռոյալթի ստացող ֆիզիկական անձինք, եթե վարձակալական վճարի, տոկոսի, շահաբաժին, ռոյալթի հանրագումարը տարեկան կազմում է 2 400 000 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ռոյալթի ստացող ֆիզիկական անձինք), ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որոնց աշխատավարձը հաշվարկվում է հարկային գործակալ չհանդիսացող անձանց կողմից.»

6) 14-րդ կետում «գրադվողներ» բառից հետո լրացնել «, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձինք (վարորդներ), որոնք միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին և ամեն պատվերի իրականացման դեպքում տրամադրում են պատվիրատուին պատվերի վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն կամ որոնք ուղևորափոխադրումներն իրականացնում են ուղևորափոխադրման ծառայության էլեկտրոնային հարթակով միջոցով.» բառերը.

7) 15-րդ կետում «անձանց» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ» բառերը:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ մասում «չվճարման» մասին բառից հետո հանել «և այդ հիմքով կարգավիճակի դադարեցման» բառերը:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Ռեգիստրում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց համար վճարման ենթակա է ամսական ապահովագրավճարի հարյուր տոկոսը, որը վճարվում է հարկային գործակալի կամ հարկային գործակալի պարտականությունից ազատված գործատուների վարձու աշխատողների կողմից՝ ապահովագրավճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու միջոցով՝ մինչև ապահովագրավճար վճարողի կարգավիճակ ստանալու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 20-ը:»:

2) 9-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«9. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան գործատուների կողմից կարող է կատարվել աշխատողների, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձանց համար վճարման ենթակա ապահովագրավճարների ամբողջությամբ կամ մասնակի վճարում:»:

3) 11-րդ մասից հետո լրացնել նոր 12-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Ապահովագրավճարներն ինքնուրույն վճարողների կամ հարկային գործակալների կողմից հաշվարկված ապահովագրավճարներից ավելի փոխանցված կամ ապահովագրավճարի գծով պարտավորության բացակայության դեպքում սխալմամբ կատարված վճարումները ենթակա են վերադարձման՝ Կառավարության կողմից սահմանած կարգով:»:

Հոդված 5. Օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասից հետո լրացնել նոր 11.1 մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1 Բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված ապահովագրավճար ինքնուրույն վճարողների, ինքնուրույն կարգով ապահովագրավճար վճարող ապահովագրված անձի կողմից երեք ամիս անընդմեջ ապահովագրավճար չվճարելու կամ ապահովագրված անձի կարգավիճակի դադարման դեպքում՝ ապահովագրավճարի գծով պարտավորությունների առկայության դեպքում, դրանց մասին ծանուցվելուց հետո մեկամսյա ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում, Հիմնադրամը դիմում է դատարան՝ դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով:»:

Հոդված 6. Օրենքի 4-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ, ԴԵՂԱՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ».

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 18. Ապահովագրված անձանց, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ և լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց իրավունքները և պարտականությունները».

2) 4-րդ մասից հետո լրացնել նոր՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ մասեր.

«5. Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք իրավունք ունեն՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ օգտվելու բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալից կամ լրացուցիչ ծառայություններից.

2) ստանալու բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած ցանկացած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից: Կնքված պայմանագրի առկայությունը պարտադիր չէ շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման դեպքերում, իսկ առողջության առաջնային պահպանման ծառայությունները, բացառությամբ Լիազոր մարմնի սահմանած դեպքերի, տրամադրվում են միայն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից, որի առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով գրանցված է ապահովագրված անձը.

3) Հիմնադրամին տեղեկացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման մերժման կամ ոչ պատշաճ տրամադրման դեպքում.

4) սույն օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու Հիմնադրամի դեմ.

5) ստանալու սպառիչ տեղեկություններ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալից կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման կարգի և պայմանների վերաբերյալ ինչպես Հիմնադրամից, այնպես էլ Հիմնադրամի հետ համապատասխան

պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից:

6.Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք պարտավոր են որպես պացիենտ՝ ապահովել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պարտականությունները:

7.Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև նրանց կնքված պայմանագրերով նախատեսված այլ իրավունքներ և կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև հօգուտ Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ:»:

Հոդված 8. Օրենքի 19-րդ հոդվածի՝

1)2-րդ մասում «ապահովագրված անձի» բառերից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց:» բառերը.

2)3-րդ մասում «ապահովագրված անձի» բառերից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց:» բառերը.

3)4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.Ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի կողմից Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքված պայմանագրերով իր իրավունքներից օգտվելու ցանկությունը (այդ թվում՝ լռությամբ) հայտնելու պահից Հիմնադրամը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, դեղատները, առանց անձի համաձայնության, կարող են լուծել կամ փոփոխել պայմանագիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և պայմանագրով նախատեսված դեպքերում:»:

Հոդված 9. Օրենքի 20-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին կետում «փաթեթում» բառից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալում կամ լրացուցիչ ծառայությունների մեջ» բառերը.

2) 1-ին մասի 2-րդ կետում «փաթեթում» բառից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալում կամ լրացուցիչ ծառայությունների մեջ» բառերը.

3) 1-ին մասի 3-րդ կետում «ապահովագրված անձի» բառերից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց» բառերը.

4) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Հիմնադրամի հետ պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովագրված անձին մատուցել պայմանագրով նախատեսված և ապահովագրական փաթեթում ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, իսկ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց՝ օրենսդրությանը և պայմանագրին համապատասխան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.

2) ապահովագրական դեպքը վրա հասնելու պարագայում երաշխավորել ապահովագրական փաթեթում ներառված բժշկական ծառայությունների մատուցման հավասար հնարավորություններ ապահովագրված բոլոր անձանց համար, այդ թվում՝ հերթագրումների պայմանների ապահովմամբ.

3) բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց երաշխավորել այդ ծառայությունների մատուցման հավասար հնարավորություններ, այդ թվում՝ հերթագրումների պայմանների ապահովմամբ.

4) ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի պահանջով նրանց տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկություն համապատասխանաբար ապահովագրական փաթեթում կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայություններում ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ստացման կարգի և պայմանների վերաբերյալ.

5) ապահովել տրամադրվող ապահովագրական փաթեթի, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությամբ օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

6) պահպանել առողջության համընդհանուր ապահովագրության, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման գործընթացներում իրենց հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

7) հատուցել իրենց մեղքով ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը.

- 8) ապահովել ապահովագրական փաթեթը, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունները տրամադրելու համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջների առկայությունը.
- 9) Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի գործողության ընթացքում Հիմնադրամին անհապաղ գրավոր տեղեկացնել լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու մասին.
- 10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ապահովագրական փաթեթի տրամադրման մասին հավաստի տվյալների մուտքագրումը առողջապահության բնագավառի տվյալների բազաներ ու սույն օրենքով նախատեսված Ռեգիստր.
- 11) հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգով Հիմնադրամ ներկայացնել ապահովագրական փաթեթի, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման տրամադրման վերաբերյալ հաշվետվություններ.
- 12) սույն օրենքի համաձայն հօգուտ ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի կնքված պայմանագրերի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից օրենսդրությամբ չնախատեսված վճարներ գանձելու դեպքում վերադարձնել վճարները՝ Կառավարության սահմանած կարգով.
- 13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:»:

Հոդված 10. Օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածները շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 25. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները

1. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկություններ են համարվում ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց բժշկական գաղտնիքը կամ «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատողի անձնական տվյալներ հանդիսացող տեղեկությունները:

2 Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկություններ չեն համարվում՝

1) ապանձնավորված տվյալները (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տվյալների), որոնց միջոցով հնարավոր չէ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

2) ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տվյալների).

3)ապահովագրված անձանց կողմից կամ ապահովագրված անձի համար վճարված (կատարված) ապահովագրավճարի չափը:

3.Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները կարող են փոխանցվել տվյալ անձի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները Հիմնադրամի կողմից մշակվում են օրենքով սահմանված կարգով՝ առանց անձի համաձայնության:

5.Օրենքից չբխող կամ օրենքի խախտմամբ առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունների փոխանցումը, այն է՝ այդ տեղեկությունները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը, առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. Առողջության համընդհանուր ապահովագրության,ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում ոլորտում գաղտնի տեղեկությունները պաշտպանվում են պետական գաղտնիքի, բժշկական գաղտնիքի և աշխատողների անձնական տվյալների պաշտպանության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման

ոլորտներում բժշկական գաղտնի տեղեկությունները, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, Կառավարության սահմանած կարգով, առանց անձի համաձայնության, կարող են փոխանցվել՝

1) առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում օրենքով նախատեսված լիազորությունների պատշաճ իրականացման համար՝ ա. Լիազոր մարմինին .

բ. ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինին .

գ. հարկային մարմինին .

2) Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին և դեղատներին, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ մատուցել ապահովագրական փաթեթի ծառայությունները կամ նվազագույն ծավալի և լրացուցիչ ծառայությունները .

3) առողջության ապահովագրություն իրականացնող մասնավոր ապահովագրական ընկերություններին, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ մատուցել ապահովագրական փաթեթի ծառայությունները, կամավոր ապահովագրական ծառայությունները .

4) հաշտարարին՝ «Հաշտարարության մասին» օրենքին համապատասխան հաշտարարության իրականացման համար .

5) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ մարմինների:

Հոդված 26. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունների պահպանումը և դրանց փոխանցման սահմանները

1. Հիմնադրամը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցներ առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնիք համարվող տեղեկությունների անվտանգության ապահովման համար:

2. Հիմնադրամը սույն օրենքով նախատեսված մարմիններին (իրավասու անձանց) առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում ոլորտում գաղտնի տեղեկությունները տրամադրում է միայն տվյալ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայություններ ստացողի մասով:»:

Հոդված 11. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.
«2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 12. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերով սահմանված կարգով վճարում է հատուցումներ.»

2) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և դեղատների հետ կնքում է հոգուտ ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց պայմանագրեր»:

Հոդված 13. Օրենքի 30-րդ հոդվածի 10-րդ մասի՝

1) 14-րդ կետում «նկատմամբ» բառի հետո լրացնել «Հիմնադրամի կողմից» բառերը.

2) 15-րդ կետում «հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրի» բառերը փոխարինել «հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերի» բառերով.

3) 16-րդ կետում «առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում» բառերը փոխարինել «առողջության համընդհանուր ապահովագրության կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների շրջանակում» բառերով:

Հոդված 14. Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում «հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրերը» բառերը փոխարինել «հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերը» բառերով:

Հոդված 15. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ, 7-րդ, 8-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) սույն օրենքի համաձայն՝ քննում ու լուծում է ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց և Հիմնադրամի միջև ծագած մասնավոր բնույթի վեճեր, որոնք բխում են հոգուտ

ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրից.

7) կատարում է առողջության համընդհանուր ապահովագրության, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտների ուսումնասիրություններ և հոգաբարձուների խորհուրդ ներկայացնում առաջարկություններ այդ ոլորտների բարելավման և զարգացման նպատակով.

8) կատարում է ապահովագրական փաթեթում ներառված ծառայությունների, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների, ինչպես նաև դրանց փոփոխման կամ լրացման վերաբերյալ առաջարկների վերլուծություններ և ներկայացնում առաջարկություններ հոգաբարձուների խորհուրդ.»:

Հոդված 16. Օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքի 38-րդ հոդվածի՝

1) վերնագրում «ապահովագրության» բառից հետո լրացնել «բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ» բառերը.

2) 1-ին մասում «համակարգի» բառից հետո լրացնել «բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ» բառերը:

Հոդված 18. Օրենքի 8-րդ գլխի վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ.

«ԳԼՈՒԽ. 8 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԻ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔ-ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ».

Հոդված 19. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում «ապահովագրված անձի» բառերից հետո լրացնել «կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց» բառերը:

Հոդված 20. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 7-րդ կետից հանել «և 15-րդ» բառերը.

2) 7-րդ կետից հետո լրացնել նոր 7.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7.1) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ 15-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբի, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան 2027 թվականի հունվարի 1-ից:».

3)8-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

8) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 4-րդ մասի՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սահմանված բնակչության խմբի մասով, 15-րդ հոդվածի 1-3-րդ, 9-րդ, 10-րդ մասերի 1-ին կետերի, 14-րդ մասի 2-րդ, 3-6-րդ կետերի, 16-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

4) 8-րդ կետից հետո լրացնել նոր 8.1-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1 սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մաս՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված բնակչության խմբի մասով, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից. »:

Հոդված 21. Օրենքի 46-րդ հոդվածի՝

1)12-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«12. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված բնակչության խմբում ներառված նոտարները և անհատ ձեռնարկատերերն ապահովագրավճարները վճարում են ինքնուրույն՝ մինչև 2026 թվականի հուլիսի 20-ը ներառյալ: Նշված անձինք ապահովագրված անձի կարգավիճակը ձեռք են բերում ապահովագրավճարի ամբողջական վճարման օրվան հաջորդող ամսվա 1-ից:».

2)20-րդ մասում «13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափը» բառերը փոխարինել «46-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված չափը» բառերով.

3)20-րդ մասից հետո լրացնել նոր 20.1-րդ և 20.2 մասեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«20.1 Եթե 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձի գործունեությունը դադարեցված է (ներկայացված է գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն), օրենքով սահմանված կարգով գործունեությունը վերսկսելու դեպքում, նրա նկատմամբ սույն օրենքն ուժի մեջ է մտնում վերսկսելու օրվան հաջորդող ամսվա 1-ից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելը գործունեությունը դադարեցված (գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն ներկայացրած) օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձանց ապահովագրավճարները ենթակա են վերադարձման Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանած կարգով, եթե օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձինք սույն օրենքի համաձայն չեն օգտվել ապահովագրական փաթեթից :».

20.2. Անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար, որոնց 65 տարին լրանում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև ապահովագրավճարի վճարման վերջնաժամկետն ընդգրկող ամիսը, ապահովագրավճար վճարողի կամ չվճարողի կարգավիճակը 2026 թվականի համար որոշվում է 2025 թվականի համար միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության կամ շահութահարկի հաշվարկի ներկայացման օրն ընդգրկող ամսվա վերջին օրը անձի՝ 65 տարեկանը լրացած լինելու հանգամանքով: Սույն կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և նոտարների 65 տարեկանը ապահովագրված անձի կարգավիճակի 12-ամսյա ժամանակահատվածում լրանալու դեպքում) ամսական դրույքաչափից ավել վճարված ապահովագրավճարները վերադարձվում են Կառավարության կողմից սահմանած կարգով:

Հոդված 22. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում:
3. Սույն օրենքի 4-րդ հոդվածով լրացվող Օրենքի 14-րդ հոդվածի 12-րդ մասի իրավակարգավորումը գործելու է սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 10. Ապահովագրական փաթեթի դեղերի ամբողջությամբ կամ մասնակի հատուցման ենթակա ծախսերը

1. Դեղերի ծախսերի ապահովագրական հատուցման կարգը հաստատում է Կառավարությունը:

2. Դեղերի հատուցման գները և հատուցման առավելագույն չափերը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը՝ Կառավարության հաստատած մեթոդաբանության հիման վրա:

3. Ապահովագրական հատուցման ենթակա դեղի համար հատուցումը տրամադրվում է դեղի համար հաշվարկված հատուցման գնի չափով, սակայն ոչ ավելի, քան տվյալ դեղի համար «Դեղերի մասին» օրենքի համաձայն սահմանված հատուցման առավելագույն չափը:

4. Սահմանված առավելագույն հատուցման չափը գերազանցող տարբերությունը, որը չի գերազանցում սահմանված առավելագույն հատուցման չափի մինչև հիսուն տոկոսը, որպես համավճար, վճարում է ապահովագրված անձը սեփական կամ այլ միջոցների հաշվին:

~~Սահմանված առավելագույն հատուցման չափի կրկնակին գերազանցող հատուցման գին ունեցող դեղը ենթակա չէ ընդգրկման հատուցվող դեղերի ցանկում հաշվարկման համար:~~ Սահմանված առավելագույն հատուցման չափի կրկնակին գերազանցող հատուցման գին ունեցող դեղը ենթակա չէ ընդգրկման հատուցվող դեղերի ցանկում և հատուցման գնի ու հատուցման առավելագույն չափի հաշվարկներում:

Հոդված 11. Առողջության համընդհանուր ապահովագրության ենթակա անձինք

1. Առողջության համընդհանուր ապահովագրության ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված բնակչության խմբերում.

2) Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունք (օրենքով նախատեսված կացության կարգավիճակ ունեցող) ունեցող օտարերկրացիները, որոնք ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում: Սույն կետը տարածվում է նաև օրենքով սահմանված կարգով ապաստան հայցողների ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականների

նկատմամբ, ովքեր ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում: Մնացած դեպքերում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներն ու ապաստան ստացած կամ չստացած փախստականներն օգտվում են բժշկական օգնության և սպասարկման լրացուցիչ ծառայություններից՝ սույն օրենքի և «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի պահանջներին համապատասխան: ~~Սույն կետը չի տարածվում փախստականների և ապաստան հայցողների, նրանց ընտանիքի անդամների վրա:~~

2. Առողջության համընդհանուր ապահովագրություն ունենալու պահանջը տարածվում է բնակչության հետևյալ խմբերի վրա.

~~1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և մինչև 18 տարեկան երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք:~~ 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացի մինչև մեկ տարեկան երեխաները, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ մեկից մինչև 18 տարեկան երեխաները, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 18-23 տարեկան անձինք, Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող առկա (ստացիոնար) ուսուցմամբ սովորող մինչև 26 տարեկան անձինք.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և 65 ու բարձր տարիքի անձինք.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և ֆունկցիոնալության համապատասխանաբար խորը, ծանր, միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձինք և հաշմանդամության 1-ին, 2-րդ, 3-րդ խումբ ունեցող անձինք.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և Չեռնոբիլի ատոմակայանի վթարի վերացման աշխատանքների մասնակիցներ.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողներ.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և մինչև երկու տարեկան երեխա խնամող մայրեր (որդեգրողներ).

7) ընտանիքում երեք կամ ավելի անչափահաս երեխաների խնամք (խնամակալություն) իրականացնող Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ ծնողներից (խնամակալներից) մեկը.

8) հաշմանդամություն ունեցող երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ ծնողներից մեկը ~~կամ, որդեգրողը կամ,~~ խնամակալը կամ հոգաբարձուն.

~~9)՝~~ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 4-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետին համապատասխան որոշված շահառուները և նրանց ընտանիքի անդամները, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անձինք և նրանց ընտանիքի անդամներն արդեն իսկ հանդիսանում են սույն օրենքի իմաստով ապահովագրված անձ՝ սույն մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության այլ

խմբերին պատկանելու հիմքով, Հայրենական մեծ պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ռեզիդենտ և 2016 թվականի ապրիլին և 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված, ինչպես նաև սույն կետում նշված հանգամանքներում ստացած վնասվածքի, խեղման կամ ձեռք բերած հիվանդության հետ պատճառական կապով հետագայում մահացած անձի ընտանիքի անդամներ, Հայրենական մեծ պատերազմի վետերաններ և նրանց հավասարեցված անձինք, բռնադատվածներ-

10) ընտանիքի անապահովության միավոր կամ աստիճան ունեցող ընտանիքի Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ անդամ՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով.

11) վարձու աշխատողներ, որոնց աշխատավարձը հաշվարկում է հարկային գործակալը կամ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուն.

12) Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերեր, նոտարներ.

~~13)~~ 13) Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ոռյալթի ստացող ֆիզիկական անձինք, եթե վարձակալական վճարի, տոկոսի, շահաբաժին, ոռյալթի **հանրագումարը** տարեկան կազմում է 2 400 000 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի (**այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ոռյալթի ստացող ֆիզիկական անձինք**), ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք, ինչպես նաև վարձու աշխատողները, որոնց աշխատավարձը հաշվարկվում է հարկային գործակալ չհանդիսացող անձանց կողմից.»

~~6)14~~ 14) **կետում «զբաղվողներ» բառից հետո լրացնել « Էլեկտրոնային հարթակով իրականացվող ուղևորափոխադրման ծառայության փոխադրողներ (վարորդներ)» բառերը-**

Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ՝ վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ոռյալթի ստացող ֆիզիկական անձինք, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքներ կատարող կամ ծառայություններ մատուցող ֆիզիկական անձինք, ինչպես նաև վարձու աշխատողներ, որոնց աշխատավարձը հաշվարկվում է հարկային գործակալ չհանդիսացող անձանց կողմից.

14) սույն մասի 1-13-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբերում չընդգրկված գյուղատնտեսական անհատական գործունեությամբ զբաղվողներ, մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձինք (վարորդներ), որոնք միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին և ամեն պատվերի իրականացման դեպքում տրամադրում են պատվիրատուին պատվերի

վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն կամ որոնք ուղևորափոխադրումներն իրականացնում են ուղևորափոխադրման ծառայության էլեկտրոնային հարթակով միջոցով

15) սույն մասի 11-14-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբերում ընդգրկված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ անձանց փոխկապակցված անձինք՝ կամավոր կարգով՝ համաձայն սույն հոդվածի 4-րդ մասի պահանջների:

3. Այն դեպքում, երբ անձն ունի սույն հոդվածի 2-րդ մասի 11-15-րդ կետերով սահմանված կարգավիճակներից որևէ մեկը և միաժամանակ ունի կամ ձեռք է բերում նաև սույն հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված համապատասխան կարգավիճակներից որևէ մեկը, ապա նրա վրա տարածվում են սույն օրենքի իմաստով առավել բարենպաստ պայմաններ նախատեսող նորմերը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով նախատեսված փոխկապակցված անձանց առողջության համընդհանուր ապահովագրությունն իրականացվում է սույն հոդվածի 2-րդ մասի 11-14-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբերում ընդգրկված անձանց ցանկությամբ՝ նրանց կողմից Լիազոր մարմնի սահմանած կարգին և օրինակելի ձևին համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ռեզիդենտ չհանդիսացող մինչև մեկ տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման պայմանները և առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի համաձայն ընդունված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների նվազագույն ծավալը և լրացուցիչ ծառայությունները, դրանցից օգտվելու կարգը և պայմանները, ինչպես նաև դրանցից օգտվելու իրավունք ունեցող բնակչության խմբերի, նրանց վիճակների և կարգավիճակների ցանկերը սահմանող Կառավարության որոշմամբ:

Հոդված 12. Ապահովագրված անձի կարգավիճակի ծագման և դադարման հիմքերը, դրանց ժամկետները, ապահովագրավճար վճարողի կամ չվճարողի կարգավիճակ ստանալու և դադարելու հիմքերը, դրանց ժամկետները

1. Սույն օրենքով սահմանված ապահովագրված անձի կարգավիճակ տրամադրվում է՝

1) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ, 9-13-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բնակչության այդ խմբերում համապատասխան կարգավիճակ ձեռք բերելու և, դրան համապատասխան, Ռեզիստրում գրանցվելուց հետո՝ անձի կողմից ինքնուրույն կամ նրա օգտին սույն օրենքով սահմանված կարգով և չափով ապահովագրավճարի վճարմանը հաջորդող ամսվա 1-ից.

2) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 8-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բնակչության այդ խմբերում համապատասխան կարգավիճակ ձեռք բերելու և, դրան համապատասխան, Ռեզիստրում գրանցվելու համար Հիմնադրամ վերջիններիս կողմից ներկայացված դիմումի հիման վրա՝ անձի կողմից ինքնուրույն կամ նրա

օգտին սույն օրենքով սահմանված կարգով և չափով ապահովագրավճարի վճարմանը հաջորդող ամսվա 1-ից:

2. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բնակչության խմբերում ներառված անձինք, հիմք ընդունելով հարկային մարմնի, այլ պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաներից ստացված տվյալները, Հիմնադրամի կողմից ստանում են ապահովագրավճար վճարողի (սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-15-րդ կետերով սահմանված դեպքերում) կամ ապահովագրավճար չվճարողի (սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված դեպքերում) կարգավիճակ, որը գրանցվում է Ռեգիստրում:

3. Ապահովագրված անձի ապահովագրավճար չվճարողի կարգավիճակը դադարում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում համապատասխան կարգավիճակը դադարելու ամսվա վերջին օրը:

4. Ապահովագրված անձի ապահովագրավճար վճարողի կարգավիճակը դադարում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում համապատասխան կարգավիճակ ստանալու և Ռեգիստրում համապատասխան բնակչության խմբի համար սահմանված կարգավիճակի գրանցման ամսվա վերջին օրը:

5. Հիմնադրամի կողմից ապահովագրավճար չվճարողի կարգավիճակ ունեցող ապահովագրված անձանց մասին տեղեկությունները փոխանցվում են հարկային մարմնին՝ այդ տեղեկությունները Ռեգիստրում սահմանված կարգով գրանցմանը հաջորդող ամսվա 1-ից ոչ ուշ:

6. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 1-ին կետով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց համար ապահովագրված անձի կարգավիճակը դադարում է համապատասխան պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաներից փոխգործելիությամբ ստացված տվյալների հիման վրա՝ ապահովագրված անձի տարիքը լրանալուն հաջորդող ամսվա 1-ից .

2) 2-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց համար ապահովագրված անձի կարգավիճակը դադարում է համապատասխան պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաներից փոխգործելիությամբ ստացված տվյալների հիման վրա՝ Հիմնադրամի կողմից Ռեգիստրում գրանցելու օրվան հաջորդող տասներկուերորդ ամսվա 1-ից կամ անձի մահվան փաստը Ռեգիստրում գրանցելուն հաջորդող ամսվա 1-ից:

7. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց համար ապահովագրված անձի կարգավիճակը դադարում է ապահովագրավճարի՝ սույն օրենքով նախատեսված վճարման ենթակա ժամանակահատվածին հաջորդող տասներկուերորդ ամսվա 1-ից կամ անձի մահվան փաստը Ռեգիստրում գրանցելուն հաջորդող ամսվա 1-ից:

8. Յուրաքանչյուր տասներկուերորդ ամսվան հաջորդող ամսի 1-ի դրությամբ ապահովագրված անձի կարգավիճակը պետք է վավերացվի համապատասխան տվյալների բազաներից փոխգործելիությամբ ստացված տվյալների հիման վրա, իսկ սույն օրենքի 11-րդ հոդվածի 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց համար՝ Հիմնադրամ վերջիններիս կողմից ներկայացված դիմումի առկայության դեպքում:

9. Սույն օրենքով նախատեսված որևէ հիմքով ապահովագրված անձի կարգավիճակը դադարելուց հետո անձն ապահովագրված անձի կարգավիճակ ձեռք է բերում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխան:

10. Սույն հոդվածի պահանջներին համապատասխան ապահովագրված անձի կարգավիճակ, որպես ֆիզիկական անձ ապահովագրավճար վճարողի կամ չվճարողի կարգավիճակ ձեռք բերած կամ ապահովագրված անձի կարգավիճակը դադարեցված անձինք Հիմնադրամի կողմից Կառավարության սահմանած [կարգով](#) ծանուցվում են ապահովագրված անձի կարգավիճակի ձեռք բերման կամ դադարեցման, ապահովագրավճար վճարողի կամ ապահովագրավճար չվճարողի կարգավիճակ ստանալու, ապահովագրավճար վճարելու պարտականության, ինչպես նաև դրա չափի, վճարման ժամկետների, վճարման կատարման կարգի, վճարման ուշացման կամ չվճարման ~~և այդ հիմքով կարգավիճակի դադարեցման~~ մասին՝ սույն օրենքով սահմանված կարգով առողջության համընդհանուր ապահովագրության վկայագրի ակտիվացումից հետո:

Հոդված 14. Առողջության համընդհանուր ապահովագրավճարների հաշվարկման բազան, հաշվետու ժամանակահատվածը, ապահովագրավճարի վճարման չափը և ժամկետները

1. Ապահովագրավճարների՝

1) ամսական հաշվարկման բազա է համարվում հարկային գործակալների և հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուների կողմից վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց համար հաշվարկված աշխատավարձը.

2) տարեկան հաշվարկման բազա են համարվում՝

ա. քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակում աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման դիմաց ստացված եկամուտը, վարձակալական վճարը, շահաբաժինը, ռոյալթին, տոկոսը, հարկային գործակալ չհանդիսացող անձանցից ստացվող աշխատավարձը,

բ. անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար հաշվարկման դեպքում՝ անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի հաշվարկում կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության մեջ արտացոլված համախառն եկամուտը (իրացման շրջանառությունը):

2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Հիմնադրամի գանձապետական հաշվին է փոխանցում սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափի հարյուր տոկոսը՝ Ռեզիստրում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված՝ ապահովագրավճար չվճարողի կարգավիճակ ունեցող անձանց համար՝ մինչև ապահովագրավճար չվճարողի կարգավիճակ ստանալու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 10-ը:

3. [Ռեզիստրում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց համար վճարման ենթակա է ամսական ապահովագրավճարի հարյուր տոկոսը, որը վճարվում է հարկային գործակալի կամ հարկային գործակալի պարտականությունից ազատված գործատուների վարձու](#)

աշխատողների կողմից՝ ապահովագրավճարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու միջոցով՝ մինչև ապահովագրավճար վճարողի կարգավիճակ ստանալու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 20-ը: ~~Ռեզիստորում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց համար վճարման ենթակա է ամսական ապահովագրավճարի հարյուր տոկոսը:~~

4. Ռեզիստորում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ և 13-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող անձանց համար վճարման ենթակա է ամսական ապահովագրավճարի հարյուր տոկոսը, որը վճարվում է ինքնուրույն՝ մինչև ապահովագրավճար վճարողի կարգավիճակ ստանալու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 20-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու միջոցով:

5. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով սահմանված անձանց համար վճարման ենթակա է ապահովագրավճարի ամսական դրույքաչափի հարյուր տոկոսը, որը վճարվում է ինքնուրույն՝ մինչև ապահովագրավճար վճարողի կարգավիճակ ստանալու ամսվան հաջորդող յուրաքանչյուր ամսվա 20-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու միջոցով:

6. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված անձանց համար վճարման ենթակա է ապահովագրավճարի ամսական դրույքաչափի հարյուր տոկոսը, որը Հիմնադրամ դիմում ներկայացրած անձը վճարում է ինքնուրույն՝ մինչև փոխկապակցված անձի՝ Ռեզիստորում գրանցման ամսվա վերջին օրը:

7. Մի քանի հաշվարկման բազաներ (ամսական և տարեկան) ունեցող անձանց՝ իրենց կամ իրենց գործատուների կողմից կատարվող ընդհանուր վճարումները չեն կարող գերազանցել ապահովագրավճարի՝ սույն օրենքով նախատեսված ամսական դրույքաչափը: Ապահովագրավճարի ամսական դրույքաչափից ավելի կատարված վճարումները վերադարձվում են անձին ապահովագրավճարի մասով պարտավորությունների կատարումից և ամսական ապահովագրավճարի դրույքաչափի համալրման մասին Ռեզիստորում գրանցումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված դեպքերում վերադարձման ենթակա ապահովագրավճարի գումարը վերադարձվում է ապահովագրված անձի՝ Հիմնադրամ ներկայացրած դիմումի հիման վրա՝ դիմումում նշված բանկային հաշվեհամարին: Մեկ անգամ ներկայացված դիմումը հիմք է սույն մասով նախատեսված ապահովագրավճարի ավելի կատարված վճարման մասը հետագա բոլոր դեպքերում վերադարձնելու համար: Դիմումի ներկայացման կարգը և օրինակելի ձևը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

9. 9. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան գործատուների կողմից կարող է կատարվել աշխատողների, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձանց համար վճարման ենթակա ապահովագրավճարների ամբողջությամբ կամ մասնակի վճարում: ~~«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված կարգով կնքված կոլեկտիվ պայմանագրերով կարող է սահմանվել գործատուների կողմից աշխատողների, ինչպես նաև նրանց փոխկապակցված անձանց համար վճարման ենթակա ապահովագրավճարների ամբողջությամբ կամ մասնակի վճարում:~~

10. Հիմնադրամը Ռեզիստորում ապահովագրվածների և նրանց փոխկապակցված անձանց տվյալների հիման վրա՝ յուրաքանչյուր ամսվա մինչև երրորդ աշխատանքային օրը ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում

ապահովագրավճարների փոխանցման հանձնարարականը՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պարտավորությունը կատարելու համար:

11. Այն գործատուները, որոնց աշխատողներին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապահովագրավճարները վճարում են Հիմնադրամին Կառավարության սահմանած կարգով:

12. Ապահովագրավճարներն ինքնուրույն վճարողների կամ հարկային գործակալների կողմից հաշվարկված ապահովագրավճարներից ավելի փոխանցված կամ ապահովագրավճարի գծով պարտավորության բացակայության դեպքում սխալմամբ կատարված վճարումները ենթակա են վերադարձման՝ Կառավարության կողմից սահմանած կարգով -

Հոդված 15. Առողջության համընդհանուր ապահովագրավճար վճարողների կողմից ապահովագրավճարների հաշվարկման, հաշվառման և փոխանցման (զանձելու) պարտավորությունները

1. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց համար ապահովագրավճարները հարկային գործակալներն արտացոլում են եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկում (բացառությամբ եթե անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն), իսկ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուներից աշխատավարձ ստացող ֆիզիկական անձինք՝ եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական պարզեցված հաշվարկում:

2. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձինք ապահովագրավճարներն արտացոլում են անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի սոցիալական վճարի հաշվարկներում, բացառությամբ հաշվետու տարվա ընթացքում բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարված անհատ ձեռնարկատերերի, որոնք ապահովագրավճարներն արտացոլում են միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության մեջ: Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձինք ապահովագրավճարներն արտացոլում են եկամտային հարկի տարեկան հաշվարկներում (հայտարարագրերում):

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված ապահովագրավճարների հաշվառումը կատարվում է «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված կարգով վարվող տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան բնակչության խմբերում ներառված անձանց կողմից նախորդ հաշվետու ժամանակահատվածի համար ներկայացված հաշվարկների ճշտման արդյունքներն ապահովագրված անձի կարգավիճակի համար հաշվի չեն առնվում:

5. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց համար ապահովագրավճարները վճարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի՝ դրա համար բացված գանձապետական հաշվին:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ապահովագրավճարի պարտավորությունները հաշվառվում են հաշվարկի ներկայացման օրվա դրությամբ:

7. Գանձապետական հաշվին կատարված վճարումները հաշվառվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրելու օրվա դրությամբ և որպես պետական բյուջեի մուտք հաշվեգրվելուց հետո ձևակերպվում են որպես ծախս և փոխանցվում են Հիմնադրամի գանձապետական հաշվին:

8. Ապահովագրավճարի պարտավորություններից առաջնահերթ մարվում են՝

1) ապահովագրավճարի գումարները, այնուհետև՝ տույժի գումարները: Ընդ որում, նախ մարվում են ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող ապահովագրավճարի գումարները:

2) սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված օրը առաջացած ապահովագրավճարի գումարները:

9. Ապահովագրավճարի գումարի ամբողջությամբ մարում է համարվում սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված հարկային հաշվարկներում արտացոլված ապահովագրավճարի ամբողջական վճարումը:

10. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված լինելու դեպքում անձը պարտավոր է՝

1) դիմել գործատուին, որ նա շարունակի վճարել ամսական ապահովագրավճարները՝ տալով համաձայնություն աշխատավարձը հետագայում սահմանված կարգով վճարելիս պահումները կամ գանձումները Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 214-րդ հոդվածով սահմանված կարգով կատարելու համար այն ժամանակահատվածում, երբ վարձու աշխատողի աշխատանքային պայմանագիրը լուծված չէ, սակայն սույն օրենքով նախատեսված ապահովագրավճարի վճարման ենթակա ժամանակահատվածում աշխատողին աշխատավարձ չի վճարվելու, կամ վճարվող աշխատավարձի համար հաշվարկված գումարը չի բավարարում ապահովագրավճարը վճարելու համար կամ

2) ինքնուրույն կատարել վճարումներ Հիմնադրամին ոչ միայն իր, այլև իր կողմից որպես փոխկապակցված անձ ապահովագրած անձի համար, եթե դադարեցվել է ապահովագրված անձի՝ սույն մասում թվարկված բնակչության խմբերում համապատասխան կարգավիճակը, և բացակայում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում համապատասխան կարգավիճակը:

11. Ապահովագրավճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետում չկատարելու դեպքում հարկային մարմինը, հարկային օրենսդրության համաձայն, որոշում է կայացնում հարկային մարմնի կողմից հսկողության ենթակա ապահովագրավճար վճարողից (եթե ապահովագրավճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում ապահովագրավճար վճարողին (հարկային գործակալին): Ապահովագրավճարների պարտավորության գծով չվճարված գումարների, դրանց համար սույն օրենքով սահմանված տույժերի կատարման ապահովումը, ինչպես նաև հարկադիր կատարմանն ուղղված

միջոցները հարկային մարմինն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով: Ընդ որում, օրենքով ապահովագրավճար վճարելու պարտականություն ունեցող, հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ չունեցող ֆիզիկական անձ հանդիսացող ապահովագրավճար վճարողների ապահովագրավճարների պարտավորության գծով չվճարված գումարների, դրանց համար նույն օրենքով սահմանված տույժերի գանձման և կատարման ապահովմանն ուղղված գործողություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5.2-րդ մասով սահմանված կարգով:

11.1 Բացառությամբ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ապահովագրավճար ինքնուրույն վճարողների, ինքնուրույն կարգով ապահովագրավճար վճարող ապահովագրված անձի կողմից երեք ամիս անընդմեջ ապահովագրավճար չվճարելու կամ ապահովագրված անձի կարգավիճակի դադարման դեպքում՝ ապահովագրավճարի գծով պարտավորությունների առկայության դեպքում, դրանց մասին ծանուցվելուց հետո մեկամսյա ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում, Հիմնադրամը դիմում է դատարան՝ դրամական միջոցներ բռնագանձելու հայցերով

12. Ապահովագրավճարի պարտավորությունները՝

1) գործատուի սնանկության գործընթացում գտնվելու դեպքում դրանք որպես չապահովված պահանջ մարվում են «Սնանկության մասին» օրենքով սահմանված կարգին և հերթականությանը համապատասխան: Ընդ որում, ապահովագրավճարը գանձապետարանի հաշվին փոխանցելու պարտավորությունը կրում է սնանկության կառավարիչը:

2) սնանկության գործընթացում գտնվող գործատուի՝ դատարանի վճռի հիման վրա լուծարման կապակցությամբ սնանկության գործընթացի ավարտի դեպքում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնում լուծարման պետական գրանցման հաջորդ օրվանից ապահովագրավճարի չկատարված պարտավորությունը հաշվառումից հանվում է և համարվում մարված:

3) անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի մահվան դեպքում դադարեցվում և հաշվառումից հանվում են մահվան մասին տեղեկություն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

13. Սույն հոդվածի 12-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված տեղեկությունները հարկային մարմինը փոխանցում է Հիմնադրամին՝ մեկօրյա ժամկետում Ռեզիստրի համար անհրաժեշտ տեղեկություններ գրանցելու համար:

14. Հարկային մարմինը՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով ստանում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ընդգրկված ապահովագրված անձանց ապահովագրավճար չվճարողի կարգավիճակի փոփոխությունների վերաբերյալ անձնավորված տվյալներ:

2) Հիմնադրամի ներկայացրած տվյալների հիման վրա եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) և տարեկան հաշվարկներում (հայտարարագրերում) արտացոլում է անձի ապահովագրավճար վճարողի կարգավիճակը՝ ապահովագրավճարը հաշվարկելու համար:

3) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ներառված անձանց կողմից կամ նրանց օգտին հաշվարկված

ապահովագրավճարների ամբողջ գումարի վճարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամին է փոխանցում պետական բյուջե փոխանցված ապահովագրավճարին համապատասխան անձանց ցուցակը (բացառությամբ այն անձանց, որոնց վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն)՝ ըստ անձանց նշելով ապահովագրավճարների չափը.

4) հաշվարկված ապահովագրավճարների վճարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամին է փոխանցում համապատասխան անձանց ցուցակը՝ նշելով հաշվարկված ապահովագրավճարների չափը (չափերը) և այն հաշվետու ժամանակահատվածը, որի համար վճարվել է.

5) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար հաշվարկված ապահովագրավճարի ամբողջ գումարը վճարելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար փոխանցման հանձնարարական սույն կետում նշված անձանց վճարած ապահովագրավճարի գումարներից Հիմնադրամի գանձապետական հաշվին գումար փոխանցելու վերաբերյալ՝ նշելով փոխանցման ենթակա գումարը: Տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար հարկային մարմնի կողմից ներկայացվող ապահովագրավճարների փոխանցման հանձնարարականում հարկային մարմինը նշում է վճարված ապահովագրավճարի այն գումարը, որը հավասար է ապահովագրավճարներ վճարող անձանց՝ ապահովագրավճարների վճարման գծով տվյալ հաշվետու ժամանակահատվածի պարտավորության չափին.

6) ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում տվյալ ամսվա համար մարված տույժերի ընդհանուր գումարի վերաբերյալ փոխանցման հանձնարարական:

15. Հարկային մարմնի և Հիմնադրամի միջև տեղեկատվության փոխանակման կարգը, ինչպես նաև ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացվող հանձնարարականի ձևը սահմանում է Կառավարությունը:

ԳԼՈՒԽ 4

~~**ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ, ԴԵՂԱՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**~~

«ԳԼՈՒԽ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ, ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆԵՐԻ, ԴԵՂԱՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ».

Հողված 18.

Ապահովագրված անձանց իրավունքները և պարտականությունները

Հողված 18. Ապահովագրված անձանց, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ և լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց իրավունքները և պարտականությունները

1. Ապահովագրված անձն իրավունք ունի՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ օգտվելու ապահովագրական փաթեթից.

2) Կառավարության հաստատած առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում բոնուսների միավորների հաշվարկման, գործակիցների կիրառման, դրանց միջոցով վճարումներ կատարելու կարգին համապատասխան ստանալու ապահովագրավճարի բոնուսներ.

3) ապահովագրական փաթեթը ստանալու Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած ցանկացած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից: Կնքված պայմանագրի առկայությունը պարտադիր չէ շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման դեպքերում, իսկ առողջության առաջնային պահպանման ծառայությունները ապահովագրված անձին, բացառությամբ Լիազոր մարմնի սահմանած դեպքերի, տրամադրվում են միայն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից, որի առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված է ապահովագրված անձը.

4) Հիմնադրամին տեղեկացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովագրական փաթեթի տրամադրման մերժման կամ ոչ պատշաճ տրամադրման դեպքում.

5) սույն օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու Հիմնադրամի դեմ.

6) ստանալու սպառիչ տեղեկություններ ապահովագրական փաթեթի ստացման կարգի և պայմանների վերաբերյալ ինչպես Հիմնադրամից, այնպես էլ Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից:

2. Ապահովագրված անձը պարտավոր է՝

1) օրենքով սահմանված դեպքերում, կարգով ու չափով վճարել ապահովագրավճար և համավճար.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ կանխարգելիչ ծառայություն.

3) որպես պացիենտ՝ ապահովել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պարտականությունները:

3. Ապահովագրված անձի՝ որպես պացիենտի պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով:

4. Ապահովագրված անձն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ և կրում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը

համապատասխան, ինչպես նաև հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

5.Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք իրավունք ունեն՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ օգտվելու բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալից կամ լրացուցիչ ծառայություններից.

2)ստանալու բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած ցանկացած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից: Կնքված պայմանագրի առկայությունը պարտադիր չէ շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման դեպքերում, իսկ առողջության առաջնային պահպանման ծառայությունները, բացառությամբ Լիազոր մարմնի սահմանած դեպքերի, տրամադրվում են միայն առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից, որի առողջության առաջնային պահպանման բժշկի մոտ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով գրանցված է ապահովագրված անձը.

3)Հիմնադրամին տեղեկացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման մերժման կամ ոչ պատշաճ տրամադրման դեպքում.

4)սույն օրենքով սահմանված կարգով բողոք ներկայացնելու Հիմնադրամի դեմ.

5)ստանալու սպառիչ տեղեկություններ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալից կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման կարգի և պայմանների վերաբերյալ ինչպես Հիմնադրամից, այնպես էլ Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողից կամ դեղատնից:

6.Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք պարտավոր են որպես պացիենտ՝ ապահովել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 26-րդ հոդվածով սահմանված պարտականությունները:

7.Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև նրանց կնքված պայմանագրերով նախատեսված այլ իրավունքներ և կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև հոգուտ Բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրերով նախատեսված այլ պարտականություններ:»:

Հողված 19.

Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, Հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերը

1. Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև պայմանագրերը կնքվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված առանձնահատկությունները: Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև պայմանագիր կնքելու համար նախատեսված նվազագույն պահանջները (այդ թվում՝ որակի) և պայմանագիր կնքելու ընթացակարգը հաստատում է Կառավարությունը:

2. Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև պայմանագրերը համարվում են կնքված՝ հօգուտ ապահովագրված անձի [կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց](#):

3. Ապահովագրված անձի [կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց](#): լռությունը համարվում է Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքված պայմանագրերով իր իրավունքից օգտվելու կամքի արտահայտություն (ցանկություն):

[4. Ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի կողմից Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքված պայմանագրերով իր իրավունքներից օգտվելու ցանկությունը \(այդ թվում՝ լռությամբ\) հայտնելու պահից Հիմնադրամը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, դեղատները, առանց անձի համաձայնության, կարող են լուծել կամ փոփոխել պայմանագիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և պայմանագրով նախատեսված դեպքերում](#)~~4. Ապահովագրված անձի կողմից Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքված պայմանագրով իր իրավունքներից օգտվելու ցանկությունը (այդ թվում՝ լռությամբ) հայտնելու պահից Հիմնադրամը, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, դեղատները, առանց ապահովագրված անձի համաձայնության, կարող են լուծել կամ փոփոխել պայմանագիրը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և պայմանագրով նախատեսված դեպքերում:~~

5. Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատում է Կառավարությունը:

6. Հիմնադրամի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, ինչպես նաև Հիմնադրամի և դեղատների միջև կնքվող պայմանագրերը հրապարակվում են Հիմնադրամի պաշտոնական կայքէջում:

Հողված 20.

Հիմնադրամի հետ պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների իրավունքները և պարտականությունները

1. Հիմնադրամի հետ պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները իրավունք ունեն՝

1) ստանալու հատուցում Հիմնադրամից՝ Հիմնադրամի հետ կնքված պայմանագրին համապատասխան ապահովագրական փաթեթում կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալում կամ լրացուցիչ ծառայությունների մեջ ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ մատուցելու համար.

2) մատուցելու ապահովագրական փաթեթում կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալում կամ լրացուցիչ ծառայությունների մեջ չներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ վճարովի սկզբունքով կամ առողջության կամավոր ապահովագրության շրջանակներում .

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հօգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալում կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ: 2.Հիմնադրամի հետ պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝

1)Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովագրված անձին մատուցել պայմանագրով նախատեսված և ապահովագրական փաթեթում ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ, իսկ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց՝ օրենսդրությանը և պայմանագրին համապատասխան բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.

2)ապահովագրական դեպքը վրա հասնելու պարագայում երաշխավորել ապահովագրական փաթեթում ներառված բժշկական ծառայությունների մատուցման հավասար հնարավորություններ ապահովագրված բոլոր անձանց համար, այդ թվում՝ հերթագրումների պայմանների ապահովմամբ.

3)բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց երաշխավորել այդ ծառայությունների մատուցման հավասար հնարավորություններ, այդ թվում՝ հերթագրումների պայմանների ապահովմամբ.

4) ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի պահանջով նրանց տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկություն համապատասխանաբար ապահովագրական փաթեթում կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայություններում ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ստացման կարգի և պայմանների վերաբերյալ.

5)ապահովել տրամադրվող ապահովագրական փաթեթի, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների

համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությամբ օրենսդրությամբ սահմանված պահանջներին.

6) պահպանել առողջության համընդհանուր ապահովագրության, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման գործընթացներում իրենց հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

7) հատուցել իրենց մեղքով ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը.

8) ապահովել ապահովագրական փաթեթը, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունները տրամադրելու համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջների առկայությունը.

9) Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի գործողության ընթացքում Հիմնադրամին անհապաղ գրավոր տեղեկացնել լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու մասին.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ապահովագրական փաթեթի տրամադրման մասին հավաստի տվյալների մուտքագրումը առողջապահության բնագավառի տվյալների բազաներ ու սույն օրենքով նախատեսված Ռեգիստր.

11) հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգով Հիմնադրամ ներկայացնել ապահովագրական փաթեթի, բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման տրամադրման վերաբերյալ հաշվետվություններ.

12)սույն օրենքի համաձայն հօգուտ ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի կնքված պայմանագրերի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից օրենսդրությամբ չնախատեսված վճարներ գանձելու դեպքում վերադարձնել վճարները՝ Կառավարության սահմանած կարգով.

13) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձի պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:~~2. Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները պարտավոր են՝~~

~~1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ապահովագրված անձին մատուցել պայմանագրով նախատեսված և ապահովագրական փաթեթում ներառված բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ.~~

~~2) ապահովագրական դեպքը վրա հասնելու պարագայում երաշխավորել ապահովագրական փաթեթում ներառված բժշկական ծառայությունների մատուցման հավասար հնարավորություններ ապահովագրված բոլոր անձանց համար, այդ թվում՝ հերթագրումների պայմանների ապահովմամբ.~~

3) ապահովագրված անձի պահանջով վերջինիս տրամադրել ամբողջական և հավաստի տեղեկություն — ապահովագրական — փաթեթում — ներառված — բժշկական — օգնության — և սպասարկման ծառայությունների ստացման կարգի և պայմանների վերաբերյալ:

4) ապահովել տրամադրվող ապահովագրական փաթեթի համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

5) պահպանել առողջության համընդհանուր ապահովագրության գործընթացում իրենց հայտնի դարձած՝ օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6) հատուցել իրենց մեղքով ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը:

7) ապահովել ապահովագրական փաթեթը տրամադրելու համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջների առկայությունը:

8) Հիմնադրամի հետ կնքված պայմանագրի գործողության ընթացքում Հիմնադրամին անհապաղ գրավոր տեղեկացնել լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու մասին:

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ապահովագրական փաթեթի տրամադրման մասին հավաստի տվյալների մուտքագրումը առողջապահության բնագավառի տվյալների բազաներ ու Ռեգիստր:

10) հոգաբարձուների խորհրդի սահմանած կարգով Հիմնադրամ ներկայացնել ապահովագրական փաթեթի տրամադրման վերաբերյալ հաշվետվություններ:

11) առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից օրենսդրության չնախատեսված վճարներ գանձելու դեպքում վերադարձնել վճարները՝ կառավարության սահմանած կարգով:

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

Հոդված 25. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները

1. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկություններ են համարվում — ապահովագրված անձի բժշկական կամ առևտրային գաղտնիքը կամ, «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատողի անձնական տվյալներ հանդիսացող տեղեկությունները:

2. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկություններ չեն համարվում՝

1) ապանձնավորված տվյալները (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տվյալների), որոնց միջոցով հնարավոր չէ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

2) ապահովագրված անձանց անունը, ազգանունը, հայրանունը:

3) ապահովագրված անձանց կողմից կամ ապահովագրված անձի համար վճարված (կատարված) ապահովագրավճարի չափը:

3. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները կարող են փոխանցվել տվյալ անձի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները Հիմնադրամի կողմից մշակվում են օրենքով սահմանված կարգով՝ առանց անձի համաձայնության: Սույն օրենքի համաձայն՝ մշակում է համարվում, անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց), ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:

5. Օրենքից չբխող կամ օրենքի խախտմամբ առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունների փոխանցումը, այն է՝ այդ տեղեկությունները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը, առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները պաշտպանվում են պետական գաղտնիքի, բժշկական գաղտնիքի, առևտրային գաղտնիքի և աշխատողների անձնական տվյալների պաշտպանության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, կառավարության սահմանած կարգով, առանց անձի համաձայնության, կարող են փոխանցվել՝

1) առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում օրենքով նախատեսված լիազորությունների պատշաճ իրականացման համար՝

ա. Լիազոր մարմնին,

բ. Ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին,

գ. հարկային մարմին:

~~2) Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին և դեղատներին, առողջության ապահովագրություն իրականացնող մասնավոր ապահովագրական ընկերություններին, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ մատուցել ապահովագրական փաթեթի ծառայությունները, նվազագույն և լրացուցիչ ծառայությունները, կամավոր ապահովագրական ծառայությունները~~

~~3) հաշտարարին՝ «Հաշտարարության մասին» օրենքին համապատասխան հաշտարարության իրականացման համար.~~

~~4) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ մարմինների:~~

~~Հոդված 26. Առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում տեղեկությունների, ներառյալ գաղտնի տեղեկությունների պահպանումը և դրանց փոխանցման սահմանները~~

~~1. Հիմնադրամը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցներ առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնիք համարվող տեղեկությունների անվտանգության ապահովման համար:~~

~~2. Հիմնադրամը սույն օրենքով նախատեսված մարմիններին (իրավասու անձանց) առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտում գաղտնի տեղեկությունները տրամադրում է միայն տվյալ ապահովագրված անձի մասով:~~

Հոդված 25. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները

1. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկություններ են համարվում ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց բժշկական գաղտնիքը կամ «Պետական գաղտնիքի մասին» օրենքի համաձայն, պետական գաղտնիք պարունակող կամ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատողի անձնական տվյալներ հանդիսացող տեղեկությունները:

2 Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկություններ չեն համարվում՝

1) ապանձնավորված տվյալները (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տվյալների), որոնց միջոցով հնարավոր չէ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը.

2) ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց անունը, ազգանունը, հայրանունը (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տվյալների).

3)ապահովագրված անձանց կողմից կամ ապահովագրված անձի համար վճարված (կատարված) ապահովագրավճարի չափը:

3.Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները կարող են փոխանցվել տվյալ անձի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունները Հիմնադրամի կողմից մշակվում են օրենքով սահմանված կարգով՝ առանց անձի համաձայնության:

5.Օրենքից չբխող կամ օրենքի խախտմամբ առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունների փոխանցումը, այն է՝ այդ տեղեկությունները որոշակի կամ անորոշ շրջանակի այլ անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված գործողությունը, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով անձնական տվյալներն այլ անձի մատչելի դարձնելը, առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. Առողջության համընդհանուր ապահովագրության,ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում ոլորտում գաղտնի տեղեկությունները պաշտպանվում են պետական գաղտնիքի, բժշկական գաղտնիքի և աշխատողների անձնական տվյալների պաշտպանության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

7. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում բժշկական գաղտնի տեղեկությունները, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, Կառավարության սահմանած կարգով, առանց անձի համաձայնության, կարող են փոխանցվել՝

1) առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում օրենքով նախատեսված լիազորությունների պատշաճ իրականացման համար՝ ա. Լիազոր մարմինն.

բ. Ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինն.

գ. հարկային մարմինն.

2) Հիմնադրամի հետ համապատասխան պայմանագիր կնքած բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին և դեղատներին, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ մատուցել ապահովագրական փաթեթի ծառայությունները կամ նվազագույն ծավալի և լրացուցիչ ծառայությունները.

3) առողջության ապահովագրություն իրականացնող մասնավոր ապահովագրական ընկերություններին, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ մատուցել ապահովագրական փաթեթի ծառայությունները, կամավոր ապահովագրական ծառայությունները.

43) հաշտարարին՝ «Հաշտարարության մասին» օրենքին համապատասխան հաշտարարության իրականացման համար.

54) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ մարմինների:

Հոդված 26. Առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնի տեղեկությունների պահպանումը և դրանց փոխանցման սահմանները

-

1. Հիմնադրամը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական միջոցներ առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում գաղտնիք համարվող տեղեկությունների անվտանգության ապահովման համար:

2. Հիմնադրամը սույն օրենքով նախատեսված մարմիններին (իրավասու անձանց) առողջության համընդհանուր ապահովագրության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտներում ոլորտում գաղտնի տեղեկությունները տրամադրում է միայն տվյալ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայություններ ստացողի մասով:

Հոդված 27. Հիմնադրամի իրավական կարգավիճակը

-

1. Հիմնադրամը սույն օրենքով և «Հիմնադրամների մասին» օրենքով սահմանված կարգով ստեղծված՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, օրենքով վերապահված

իրավասություններով և գործառույթներով օժտված իրավաբանական անձ է, որի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Կառավարության: Հիմնադրամը ստեղծվում է և դրա կանոնադրությունը հաստատվում է Կառավարության որոշմամբ:

~~2. Հիմնադրամը կարող է լուծարվել, վերակազմակերպվել կամ սնանկ ճանաչվել օրենքով սահմանված կարգով:~~

2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված կարգով:

Հոդված 28. Հիմնադրամի իրավասությունները

-

1. Հիմնադրամն իրականացնում է հետևյալ իրավասությունները.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եղանակներով տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հիմնադրամի ակտիվները՝ սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար.

~~2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրով սահմանված կարգով վճարում է ապահովագրական հատուցումներ.~~

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերով սահմանված կարգով վճարում է հատուցումներ.

3) վարում է Ռեզիստրը.

~~4) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և դեղատների հետ կնքում է հոգուտ ապահովագրված անձի պայմանագրեր.~~

4) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և դեղատների հետ կնքում է հոգուտ ապահովագրված կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց պայմանագրեր

Հոդված 30. Հոգաբարձուների խորհուրդը

10. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝

14) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, դեղատների և Հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ Հիմնադրամի կողմից ստուգումների, մշտադիտարկումների, դիտարկումների և փորձագիտական աշխատանքների իրականացման կարգի սահմանումը.

15) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, դեղատների և Հիմնադրամի միջև ~~հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրի~~ հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերի կատարման ընթացքի և որակի ստուգման կարգի սահմանումը.

16) ~~առողջության համընդհանուր ապահովագրության շրջանակում~~ առողջության համընդհանուր ապահովագրության կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների շրջանակում տրամադրվող ծառայությունների հատուցման պայմանների, մատուցվող ծառայությունների գների հաստատումը.

Հոդված 31. Գլխավոր տնօրենը

7. Գլխավոր տնօրենը՝

1) տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից, այդ թվում՝ ~~հոգուտ ապահովագրված անձանց պայմանագրերը~~ հոգուտ ապահովագրված անձի կամ բժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների ստացող անձանց կնքված պայմանագրերը.

Հոդված 32. Առողջության համընդհանուր ապահովագրության գործընթացի ռազմավարական պլանավորման, ռիսկերի կառավարման և վերահսկողությունն իրականացնող գործադիր հանձնաժողովը

3. Վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը՝

~~4) իր իրավասությունների սահմանում ստուգում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների, դեղատների և Հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի կատարման ընթացքը, որակը և ամփոփ տվյալները ներկայացնում գլխավոր տնօրենին և հոգաբարձուների խորհուրդ: (Ճանաչվել է ուժը կորցրած)~~

~~6) սույն օրենքի համաձայն՝ քննում ու լուծում է ապահովագրված անձանց և Հիմնադրամի միջև ծագած մասնավոր բնույթի վեճեր, որոնք բխում են հոգուտ ապահովագրված անձի կնքված պայմանագրից:~~

~~7) կատարում է առողջության համընդհանուր ապահովագրության ոլորտի ուսումնասիրություններ և հոգաբարձուների խորհուրդ ներկայացնում առաջարկություններ առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի բարելավման և զարգացման նպատակով:~~

~~8) կատարում է առողջության համընդհանուր ապահովագրության փաթեթում ներառված ծառայությունների, դրանց փոփոխման առաջարկությունների վերաբերյալ վերլուծություններ և ներկայացնում առաջարկություններ հոգաբարձուների խորհուրդ:~~

6) սույն օրենքի համաձայն՝ քննում ու լուծում է ապահովագրված կամ թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց և Հիմնադրամի միջև ծագած մասնավոր բնույթի վեճեր, որոնք ըխում են հօգուտ ապահովագրված կամ թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրից:

7) կատարում է առողջության համընդհանուր ապահովագրության, թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման ոլորտների ուսումնասիրություններ և հոգաբարձուների խորհուրդ ներկայացնում առաջարկություններ այդ ոլորտների բարելավման և զարգացման նպատակով:

8) կատարում է ապահովագրական փաթեթում ներառված ծառայությունների, թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների, ինչպես նաև դրանց փոփոխման կամ լրացման վերաբերյալ առաջարկների վերլուծություններ և ներկայացնում առաջարկություններ հոգաբարձուների խորհուրդ:

Հոդված 38. Առողջության համընդհանուր ապահովագրության թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ պետական բյուջետային ֆինանսավորումը

1. Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով, սույն օրենքին ու բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան, ապահովում է առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի թշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալի կամ լրացուցիչ ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ ֆինանսավորումը՝ իր պարտավորությունների մասով ապահովագրավճարների վճարումները կատարելու միջոցով, ինչպես նաև նվազագույն ծավալների և լրացուցիչ ծառայությունների դիմաց փաստացի հատուցելու միջոցով:

ԳԼՈՒԽ 8

-

**~~ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴԵՍ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ
ԲՈՂՈՔ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ~~**

ԳԼՈՒԽ. 8 ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՁԻ ԿԱՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԾԱՎԱԼԻ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔ-ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ».

Հոդված 39. Բողոք-պահանջների քննության ընդհանուր կարգը

1. Ապահովագրված անձի և Հիմնադրամի միջև ծագած մասնավոր բնույթի այն վեճերը, որոնք բխում են հոգուտ ապահովագրված անձի կամ քժշկական օգնության և սպասարկման նվազագույն ծավալ կամ լրացուցիչ ծառայություններ ստացող անձանց կնքված պայմանագրից, լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վեճը լուծելու համար ապահովագրված անձը իր բողոք-պահանջը (այսուհետ՝ բողոք) ներկայացնում է Հիմնադրամ: Հիմնադրամում բողոքը քննում է Վերահսկողություն իրականացնող հանձնաժողովը: Սույն հոդվածով սահմանված ընթացակարգով վեճի քննությունը պարտադիր է նախքան հաշտարարությունը կամ դատարան դիմելը:

Հոդված 45. Եզրափակիչ մաս

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ՝

1) սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2028 թվականի հունվարի 1-ից.

2) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբերի, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից.

3) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող և 2025 թվականի նոյեմբեր ամսվա համար 2025 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի ամսական (պարզեցված) հաշվարկներով յուրաքանչյուր գործատուից 200 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի աշխատավարձ ունեցողների, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և դրան հաջորդող ամիսների աշխատավարձի վրա: Ընդ որում, սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձի մասով ապահովագրավճարները շարունակում են հաշվարկվել սույն օրենքով սահմանված կարգով՝ անկախ հաջորդող 12 ամսվա ընթացքում աշխատավարձի նվազեցումից.

4) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող և 2026 թվականի հունվար ամսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում յուրաքանչյուր գործատուից 200 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի աշխատավարձ ունեցողների, որոնց մասով սույն օրենքն ուժի մեջ է մտնում այդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից և տարածվում է այդ ամսվան

հաջորդող ամսվա և դրան հաջորդող ամիսների աշխատավարձի վրա: Ընդ որում, 2026 թվականի հունվար ամսվանից սկսած՝ որևէ ամսվա արդյունքով աշխատավարձը յուրաքանչյուր գործատուից 200 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի կազմելու դեպքում սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձի մասով ապահովագրավճարները շարունակում են հաշվարկվել սույն օրենքով սահմանված կարգով՝ անկախ հաջորդող 12 ամսվա ընթացքում աշխատավարձի նվազեցումից.

5) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող և 2025 թվականի համար ներկայացված միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության և (կամ) շրջանառության հարկի հաշվարկներում և (կամ) շահութահարկի հաշվարկում 2 400 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի համախառն եկամուտ (իրացման շրջանառություն) հայտարարագրած անձանց, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Ընդ որում, նշված հաշվարկների ճշտման արդյունքում արտացոլված եկամուտների նվազեցումը հաշվի չի առնվում.

6) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձանց, ինչպես նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ և 12-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող և համապատասխանաբար մինչև 200 000 Հայաստանի Հանրապետության դրամ աշխատավարձ և մինչև 2 400 000 Հայաստանի Հանրապետության դրամ համախառն եկամուտ (իրացման շրջանառություն) հայտարարագրած անձանց համար, որոնց մասով սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երկրորդ տարվա հունվարի 1-ից և տարածվում է այդ ամսվանից վճարվող ապահովագրավճարների վրա: Եթե սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երկրորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձի գործունեությունը դադարեցված է (ներկայացված է գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն), ապա այդ անձի համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում գործունեությունը վերսկսելու (գործունեությունը վերսկսելու մասին հայտարարության մեջ նշված) օրվան հաջորդող ամսվա 1-ից և տարածվում է այդ ամսվանից վճարվող ապահովագրավճարների վրա.

7) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 7-րդ, 14-րդ ~~և 15-րդ~~ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբերի, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երրորդ տարվա հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 14-րդ կետով միայն ազդակիր բնակավայրի կարգավիճակ ունեցող բնակավայրում հաշվառում ունեցողների և նրանց փոխկապակցված անձանց, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից՝ ազդակիր համայնքի՝ Կառավարության սահմանած կարգով ընդունված բնապահպանական ծրագրով նախատեսված ապահովագրավճարների վճարման մասին դրույթների համաձայն.

[7.1\) սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ 15-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող բնակչության խմբի, որոնց համար սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան 2027 թվականի հունվարի 1-ից](#)

[8\) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 4-րդ մասի՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սահմանված բնակչության խմբի մասով, 15-րդ հոդվածի 1-3-րդ, 9-](#)

[րդ, 10-րդ մասերի 1-ին կետերի, 14-րդ մասի 2-րդ, 3-6-րդ կետերի, 16-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.](#)

~~8) սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 15-րդ հոդվածի 1-3-րդ, 9-րդ, 10-րդ մասերի 1-ին կետերի, 14-րդ մասի 2-րդ, 3-6-րդ կետերի, 16-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.~~

[8.1 սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մաս՝ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված բնակչության խմբի մասով, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից.](#)

9) սույն օրենքի 3-րդ հոդվածի 5-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2029 թվականի հունվարի 1-ից:

2. Սահմանել, որ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ընդգրկված անձինք և սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված անձինք ապահովագրված անձի կարգավիճակ են ստանում 2026 թվականի հունվարի 1-ից՝ հիմք ընդունելով 2025 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ տվյալների բազաների փոխգործելիության հիման վրա Ռեգիստրում գրանցված կարգավիճակները:

Հոդված 46. Անցումային դրույթներ

1. Սահմանել, որ սույն օրենքով նախատեսված առողջության համընդհանուր ապահովագրությունը ներդրվելու է փուլային սկզբունքով, իսկ սույն օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա ապահովագրավճարի կատարման պարտականությունը ծագելու է սույն օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից սույն օրենքի 45-րդ հոդվածով սահմանված բնակչության համապատասխան խմբերում ներառված անձանց համար սահմանված ժամկետներին համապատասխան:

2. Սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ուժի մեջ մտնելուց առնվազն վեց ամիս առաջ Լիազոր մարմնի կողմից առողջության համընդհանուր ապահովագրության ներդրման վերլուծության ամփոփ տվյալների հիման վրա Կառավարությունը ձեռնարկում է միջոցառումներ առողջության համընդհանուր ապահովագրության ամբողջական ներդրման համար վեր հանված խնդիրների վերացման և պատշաճ ներդրումն ապահովող աշխատանքների կատարման ուղղությամբ:

3. Սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված ժամկետներում առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ամբողջական ներդրումից հետո՝ երկամյա ժամկետում, Լիազոր մարմինը կատարած վերլուծության տվյալներով Կառավարություն առաջարկություն է ներկայացնում Հիմնադրամի պահուստային ֆոնդի կառավարման վերաբերյալ:

4. Սույն օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված բոնուսների կիրառումը կսկսվի համակարգի ամբողջական ներդրումից հետո՝ 2029 թվականի հունվարի 1-ից:

5. Սահմանել, որ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքով սահմանված կարգով ֆունկցիոնալության գնահատում չանցած հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ սույն օրենքը կիրառվում է մինչև 2028 թվականի հունվարի 1-ը: Սույն մասով սահմանված ժամկետի ավարտից վեց ամիս առաջ Լիազոր մարմինը աշխատանքի և

սոցիալական հարցերի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի հետ համատեղ Կառավարություն առաջարկություն է ներկայացնում ֆունկցիոնալության գնահատում չանցած հաշմանդամություն ունեցող անձանց մասով առողջության համընդհանուր ապահովագրության համակարգում սույն օրենքով նախատեսված իրավունքների երաշխավորման հետագա հնարավորության մասին:

6. Սահմանել, որ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետական կառավարման մարմինները սույն օրենքով նախատեսված Ռեգիստրի գործարկման նպատակով Հիմնադրամին են փոխանցում իրենց էլեկտրոնային համակարգերում առկա և Ռեգիստրում սույն օրենքով սահմանված կարգով (այդ թվում՝ օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող) գրանցման ենթակա տվյալները, 2026 թվականի հունվարի 1-ից ապահովում են փոխգործելիության հիմունքներով դրանց տրամադրման մեխանիզմների մշակումն ու իրականացումը, հարցումների հիման վրա տվյալների և դրանց փոփոխությունների տրամադրումը՝ Կառավարության սահմանած կարգով:

7. 2026-2028 թվականների ընթացքում կանխարգելիչ ծառայություն ստացած կամ սույն օրենքի համաձայն կանխարգելիչ ծառայություն անցնելու համար հերթագրված ապահովագրված անձինք են միայն իրավունք ստանում 2029 թվականի ընթացքում օգտվելու ապահովագրական փաթեթից: Հետագա տարիներին կանխարգելիչ ծառայություն ստանալու և, դրան համապատասխան, ապահովագրական փաթեթից օգտվելու կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և սույն օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Լիազոր մարմնի սահմանած կանխարգելիչ ծառայության իրականացման կարգին և պայմաններին համապատասխան:

8. Մինչև սույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն հոգաբարձուների խորհրդի ձևավորումը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Լիազոր մարմնի ներկայացմամբ վարչապետի որոշմամբ նշանակվում է Հիմնադրամի հինգ հոգուց բաղկացած ժամանակավոր խորհուրդ, որը, սույն օրենքի համաձայն, իրավասու է վեցամսյա ժամկետում իրականացնելու սույն օրենքով հոգաբարձուների խորհրդին վերապահված իրավասությունները մինչև սույն օրենքի համաձայն հոգաբարձուների խորհրդի ձևավորումը, որից հետո ժամանակավոր խորհրդի լիազորությունները համարվում են դադարեցված:

9. Սահմանել, որ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (բացառությամբ մինչև 18 տարեկան երեխաների) և 3-11-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ընդգրկված և սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն ապահովագրավճար վճարող անձանց համար 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար վճարման ենթակա են՝

1) հարկային գործակալի կողմից՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափից 4800 Հայաստանի Հանրապետության դրամը, եթե անձի աշխատավարձը, ըստ յուրաքանչյուր գործատուի, կազմում է մինչև 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն կետի պահանջները սոցիալական փաթեթի շահառուների համար կիրառվում են՝ հաշվի առնելով սույն հոդվածի 18-րդ մասի դրույթները՝ ապահովելով սույն օրենքի ապահովագրավճարի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափը լրիվ վճարելու հետ կապված պահանջը:

2) սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափի հարյուր տոկոսը, եթե անձի աշխատավարձի չափը 500 001 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի է:

10. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված բնակչության խմբերում ընդգրկված և սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ապահովագրավճար վճարող անձանց համար 2026 թվականի համար վճարման ենթակա է սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի տարեկան դրույքաչափի հարյուր տոկոսը:

11. Սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց հարկային գործակալները, ինչպես նաև հարկային գործակալի պարտավորությունից ազատված գործատուների վարձու աշխատողները սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված չափերով հաշվարկված ապահովագրավճարները 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարում են մինչև ապահովագրավճար վճարողի կարգավիճակ ստանալու ամսվա 20-ը ներառյալ:

12. Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված բնակչության խմբում ներառված նոտարները և անհատ ձեռնարկատերերն ապահովագրավճարները վճարում են ինքնուրույն՝ մինչև 2026 թվականի հուլիսի 20-ը ներառյալ: Նշված անձինք ապահովագրված անձի կարգավիճակը ձեռք են բերում ապահովագրավճարի ամբողջական վճարման օրվան հաջորդող ամսվա 1-ից: ~~Սույն հոդվածի 10-րդ մասով սահմանված բնակչության խմբում ներառված անձինք ապահովագրավճարը վճարում են ինքնուրույն՝ մինչև 2026 թվականի ապրիլի 20-ը ներառյալ: Նշված անձինք ապահովագրված անձի կարգավիճակը ձեռք են բերում ապահովագրավճարի ամբողջական վճարման օրվան հաջորդող ամսվա 1-ից:~~

13. Վարձու աշխատողների համար, ըստ օրենքով սահմանված միջակայքերի և դրույքաչափերի, ապահովագրական վճարների հաշվարկման համար հիմք են ընդունվում եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական (պարզեցված) հաշվարկները: Ընդ որում, եկամտային հարկի ամսական (պարզեցված) հաշվարկների ճշտման դեպքում աշխատավարձի նվազեցումը հաշվի չի առնվում:

14. 2026 թվականի համար սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված բնակչության խմբում ընդգրկված անձանց մասով ապահովագրավճարները եկամտային հարկի ամսական (պարզեցված) հաշվարկներում չեն արտացոլվում:

15. Հարկային գործակալ հանդիսացող գործատուի, հարկային գործակալի պարտավորություններից ազատված գործատուի վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից ամբողջական պարտավորության մարման դեպքում հարկային մարմինը տվյալ գործատուի աշխատողների, հարկային գործակալի պարտավորություններից ազատված գործատուի վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների ցանկը փոխանցում է Հիմնադրամին Կառավարության սահմանած կարգով:

16. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (բացառությամբ մինչև 18 տարեկան երեխաների) և 3-10-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում ընդգրկված անձանց համար վճարված ապահովագրավճարը ենթակա է վերադարձման՝ վճարման մասին հարկային մարմնի կողմից Հիմնադրամին տեղեկություն հայտնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այդ անձանց կողմից Հիմնադրամին մեկ անգամ ներկայացված էլեկտրոնային դիմումի համաձայն:

17. 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսների բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը Հիմնադրամի կողմից յուրաքանչյուր ամիս ներկայացված հանձնարարագրի հիման վրա Հիմնադրամի գանձապետական հաշվին է փոխանցում 6000 Հայաստանի Հանրապետության դրամ՝ սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված բնակչության խմբում ներառված անձանց համար (բացառությամբ օրենքով սահմանված կարգով սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող անձանց)՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը:

18. 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար օրենքով սահմանված կարգով սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող ապահովագրված անձինք ապահովագրված անձի կարգավիճակի առկայության ամբողջ ժամանակահատվածի համար (կարգավիճակն ստանալուց հետո՝ 12 ամսվա ընթացքում) պարտավոր են վճարել ամսական 6000 դրամ ինքնուրույն, եթե աշխատավարձի չափը ապահովագրավճարի հաշվարկման ամսում կազմել է մինչև 500 000 Հայաստանի Հանրապետության դրամ:

19. 2026 թվականի համար աշխատանքից ազատված վարձու աշխատողները ապահովագրված անձի կարգավիճակի առկայության ամբողջ ժամանակահատվածի համար (կարգավիճակն ստանալուց հետո՝ 12 ամսվա ընթացքում) պարտավոր են սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափը վճարել ինքնուրույն:

20. 2025 թվականի դեկտեմբեր ամսվա և հաջորդող տարվա համար հարկային գործակալ հանդիսացող գործատուն և հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի վարձու աշխատողը պարտավոր են վճարել սույն օրենքի [46-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապահովագրավճարի ամսական դրույքաչափը](#), եթե որևէ ամսվա արդյունքով սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված բնակչության խմբում ներառված աշխատողի աշխատավարձը չի բավարարում (այդ թվում՝ տվյալ ամսում աշխատավարձ չհաշվարկվելու դեպքում) ապահովագրավճարի հաշվարկման և վճարման համար:

[20.1 Եթե 2026 թվականի հունվարի 1-ի դրությամբ սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձի գործունեությունը դադարեցված է \(ներկայացված է գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն\), օրենքով սահմանված կարգով գործունեությունը վերսկսելու դեպքում, նրա նկատմամբ սույն օրենքն ուժի մեջ է մտնում վերսկսելու օրվան հաջորդող ամսվա 1-ից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելը գործունեությունը դադարեցված \(գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն ներկայացրած\) օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձանց ապահովագրավճարները ենթակա են վերադարձման Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված կարգով, եթե օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող անձինք սույն օրենքի համաձայն չեն օգտվել ապահովագրական փաթեթից :».](#)

[20.2. Անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար, որոնց 65 տարին լրանում է 2026 թվականի հունվարի 1-ից մինչև ապահովագրավճարի վճարման վերջնաժամկետն ընդգրկող ամիսը, ապահովագրավճար վճարողի կամ չվճարողի կարգավիճակը 2026 թվականի համար որոշվում է 2025 թվականի համար միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության կամ շահութահարկի հաշվարկի ներկայացման](#)

օրն ընդգրկող ամսվա վերջին օրը անձի՝ 65 տարեկանը լրացած լինելու հանգամանքով: Սույն կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի և նոտարների 65 տարեկանը ապահովագրված անձի կարգավիճակի 12-ամսյա ժամանակահատվածում լրանալու դեպքում) ամսական դրույքաչափից ավելի վճարված ապահովագրավճարները վերադարձվում են Կառավարության կողմից սահմանած կարգով

21. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1309-06.04.2025-ԱՌՀ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցող)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Առաջարկվում է ապաստան հայցողներին ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներին, ովքեր ընդգրկված են սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ, 12-րդ, 14-րդ և 15-րդ կետերով սահմանված բնակչության խմբերում, ներառել ապահովագրության ենթակա բնակչության խմբերում, նկատի ունենալով, որ նրանք «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի համաձայն, վճարովի աշխատանք և ձեռնարկատիրության գործունեություն իրականացնելու իրավունք ունեն։ Իսկ նրանք, ովքեր չեն ներառվի այդ խմբերում, կշարունակեն օրենքի համաձայն օգտվել օրենքով երաշխավորված լրացուցիչ ծառայություններից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-	Առաջարկվում է հստակեցնել վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին, ոռոյալթի ստացող ֆիզիկական անձանց կողմից ապահովագրավճար վճարելու համար վարձակալական վճար, տոկոս, շահաբաժին,	Ընդունվել է:	Ընդունվել է:

		րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետ	ռոյալթիի գումարի ստորին շեմը՝ սահմանելով, որ դրանց հանրագումարը տարեկան կազմում է 2 400 000 Հայաստանի Հանրապետության դրամ և ավելի:		
3.		«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ	Առաջարկվում է հստակեցնել մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց (վարորդներ) սահմանումը՝ ներառելով նրանց, ովքեր օրենսդրության համաձայն, միացել են հարկային մարմնի էլեկտրոնային համակարգին և ամեն պատվերի իրականացման դեպքում տրամադրում են պատվիրատուին պատվերի վճարման էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոն կամ որոնք ուղևորափոխադրումներն իրականացնում են ուղևորափոխադրման ծառայության էլեկտրոնային հարթակով միջոցով	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածով փոփոխվող 25-րդ հոդվածի 7-րդ մաս	Առաջարկվում է ուղղել համարակալման մեջ տեղ գտած վրիպակը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածով օրենքի 46-րդ մասի 20.1 լրացում	Առաջարկվում է հստակեցնել ապահովագրավճարի վերադարձման պայմանը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքում	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն	Ընդունվել է:	Ընդունվել է:

		փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածներ	լրացվել է նախագծով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելու ժամկետները և այդ կապակցությամբ օրենքի նախագծի 22-րդ և 23-րդ հոդվածները միավորվել են մեկ հոդվածում՝ որպես եզրափակիչ հոդվածներ:		
7.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող օրենքի 2-րդ հոդված	Առաջարկվում է շտկել համարակլման վրիպակները	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով փոփոխվող 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2.1-րդ կետ	Տարընկալումն բացառելու նպատակով «ծառայությունների» բառը փոխարինել «ծառայություններ ստացող» բառերով.	Ընդունվել է:	Ընդունվել է:
9.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 37-րդ հոդվածի 10-րդ մաս	Առաջարկվում է շտկել վրիպակը և «շտեմարանից» բառը փոխարինել օրենքում կիրառվող «ռեգիստրից» բառով.	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 37-րդ հոդվածի 11-րդ մաս	Առաջարկվում է հանել «խորհրդատվական» բառը, նկատի ունենալով, որ Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի որոշումների մի մասը նման բնույթ չունի, օրինակ՝ գործի քննություն սկսելը մերժելու մասին որոշումները.	Ընդունվել է:	Ընդունվել է:
111.	ՀՀ կառավարություն	«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով փոփոխվող 37-րդ հոդվածի 13-րդ և 14-րդ մասեր	Առաջարկվում է հիշատակված մասերում «ծածկագրված» բառերը փոխարինել «ապանձնավորված» բառերով, հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի պահանջները:	Ընդունվել է:	Ընդունվել է: